Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի հունվարի 30-ին Բագարան համայնքի ղեկավարը ներկայացրեց 2018-թ-ի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն՝ Բագարան համայնքի բնակիչների ավագանիների մասնակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից պարտադիր լիազորությունների իրականացման շարքում տեղ են գբաղեցրել քաղաքացիների կողմից բարձրացրած դիմումների և բողոքների ընթացք տալը, ինչպես նաև համայնքի ղեկավարի մոտ անհատական ընդունելություն կազմակերպելը:

2018 թվականին համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 29 որոշում և 6 կարգադրություն:

2018 թվականին քաղաքացիների կողմից ստացվել է 164 բանավոր դիմում , որոնց տրվել է գրավոր պատասխան և 20 գրավոր դիմում որից 19-ին տրվել է պատասխան:

2018 թվականին հրավիրվել է ավագանու 9 նիստ և ընդունվել է 33 որոշում

Հաշվետու տարում ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության և ռուսական զորամասի հետ համատեղ փոխհամագործակցության միջոցով լուծվել է Բագարանի բնակչության անցաթղթերի հարցը սահմանի ներսում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար,ինչպես նաև կատարվել է Ախուրյան և Արաքս գետերի մերձափնյա տարածքի չոր վառելափայտի սանիտարական մաքրման աշխատանքներ , որով լուծվել է համայնքի բնակիչների ձմեռվա վառելափայտի հարցը:

Ֆինանսների բնագավառում մշակվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, որի անբաժան մասն են կազմել նաև տեղական տուրքերի և վճարների, համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դրույքաչափերի հաստատումը:

Համայնքի բյուջեն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝

Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր

	Վարչական բյուջե (հազ.դրամ)	Ֆոնդային բյուջե (հազ.դրամ)
Հողի հարկ	3410.0	
Գույքահարկ	1012.4	
Հողի վարձավճար	300.0	
Տեղական տուրք	50.0	
Աղբահանության վճար	400.0	
Դոտացիա	10022.1	
Տարեսկզբի ազատ մնացորդ Ֆոնդայինբյուջե		9963.3
ԸՆԴԱՄԵՆԸ	15194.5	9963.3

Ծ Ա Խ Ս Ե Ր

	Վարչական բյուջե (հազ.դրամ)
Աշխատավարձ	9350.0
էլեկտրոէներգիայի վարձ	100.0
Տեղեկատվական ծառայություն	100.0
Ներքին գործուղումներ	300.0
Գրասենյակային նյութեր	300.0
Տրանսպորտային նյութեր	800.0
Մեքենայի ընթացիք նորոգում	600.0
Աղբահանում	400.0

Համակարգչային ծառայություն	200.0
Սոց. հատուկ արտոնություն	800.0
Կապի ծառայություն	150.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	1100.0
Նվիրատվ. այլ շահույթ չհետապ. կազմակերպություն.	30.0
Մասնագիտական ծառայություն	300.0
Պահուստային ֆոնդ	664.5
ԸՆԴԱՄԵՆԸ	15194.5

Ֆոնդային բյուջե

Կապիտալ շինարարությունը	9963.3
ԸՆԴԱՄԵՆԸ	9963.3

2018թ-ին բյուջեի կատարողականը հետևյալն է՝

Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր

Վարչական բյուջե

	Պլանային (հազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Հողի հարկ	3410.0	3203.6	93.9
Գույքահարկ	1012.4	1170.9	115.7
Հողի վարձավճար	300.0	413.3	137.8
Տեղական տուրք	50.0	0	0
Աղբահանության վճար	400.0	0	0
Դոտացիա	10022.1	10022.1	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ	15194.5	14809.9	97.5

Ծ Ա Խ Ս Ե Ր

Վարչական բյուջե

Պլանային	(հազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Աշխատավարձ	9350.0	8450.0	90.4
էլեկտրոէներգիայի վարձ	100.0	60.9	60.9
Ներքին գործուղումներ	300.0	300.0	100.0
Տեղեկատվական ծառայութ.	100.0	55.2	55.2
Համակարգչային ծառայութ.	200.0	0	0
Գրասենյակային նյութեր	300.0	300.0	100.0

Կապի ծառայություն	150.0	146.9	146.9
Տրանսպորտային նյութեր	800.0	800.0	100.0
Հատուկ նպատակ. այլ նյութեր	1100.0	998.0	90.7
Մեքենայի ընթացիք նորոգում	600.0	0	0
Աղբահանում	400.0	400.0	100.0
Սոց. հատուկ արտոնություն	800.0	700.0	100.0
Մասնագիտական ծառայութ.	300.0	155.0	51.7
Նվիրատվ. այլ շահույթ չհետապ. կազմակերպություն.	30.0	11.4	38.0
Պահուստային ֆոնդ	664.5	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	15194.5	12377.4	81.5

Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր

Ֆոնդային բյուջե

	Պլանային (հազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Տարեսկզբի ազատ մնացորդ	9963.3	9963.3	100.0
Հողի իրացումից մուտքեր	0	244.8	244.8
Ընդամենը	9963.3	10208.1	102.5

Ծ Ա Խ Ս Ե Ր

Ֆոնդային բյուջե

	Պլանային (հազ.դրամ)	Փաստացի (հազ.դրամ)	Կատարող (%)
Կապիտալ շինարարուբքուն	9963.3	1000.0	10.0
Հողի իրացումից մուտքեր		-244.8	
ԸՆԴԱՄԵՆԸ	9963.3	755.2	8.6

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ համայնքի ղեկավարը պատասխանատու է բյուջեի կատարման համար,ուստի կլիսամյակային կտրվածքով հաղորդումներ է ներկայացվել ավագանուն բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ:

Աջակցություն է ցուցաբերվել զինկոմիսարիատի և մարզային զորակոչային հանձնաժողովին ժամկետային զինծառայողների զորակոչի կազմակերպման և անցկացման հարցում:

2018 թվականին անցկացվել է համայնքի կենտրոնական՝ Գևորգ Մարզպետունի և Գևորգ Մարզպետունու 3-րդ փկղ, փողոցների գիշերային լուսավորություն:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի տարածքում ամիսը 2 անգամ իրականացվել է աղբահանություն:

Վերանորոգվել և ավազապատվել է գարնանային անձրևներից քանդված և անանցանելի դարձած գյուղամիջյան շուրջ 3 կմ ճանապարհ:

Բնակչությանը աջակցել եմ ծիրանի բերքահավաքը ժամանակին անկորուստ հավաքելու և առաքելու

Որպես կանոն համայնքային ենթակայություն ունեցող բուժական ամբուլատորիան իրականացրել է բոլոր նախատեսված պատվաստումները և անհրաժեշտության դեպքում բոլոր հիվանդներին առաջին բուժ օգնությունը:

Որպես պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարը կազմակերպել է համայնքի տարածքում գտնվող անասնաբուժական ծառայության գործունեությունը կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ագրարային կանոնների պահպանման հետ կապված:

Համայնքում 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել է 264 գլուխ խոշոր, 187 գլուխ խոզեր, 1790 գլուխ մանր եղջերավոր անասուններ և 1591 թև թռչուն:

Գյուղապետարանը ջրային ընկերության «Շենիկ» ՋՕԸ-ի հետ համագործակցելով կարգավորել է գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը:

Դեռևս համայնքում կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք անհրաժեշտ են համայնքի համար.

1. Խմելաջրի ցանցի կառուցում
2. Ճանապարհների կապիտալ վերանորոգում
3. Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում
4. Մշակույթի տան կապիտալ վերանորոգում
5. Գազաֆիկացում
6. Մանկապարտեզի շենքի կառուցում

ՀՀ Արմավիրի մարզի Բագարան համայնքի ղեկավար՝ Գ. Մարգարյան

30.01.2019թ